## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

*Խավարումներն այն եզակի երկնային երևույթներից են, որոնք մանրակրկիտ հետազոտվել են դեռևս մի քանի հազարամյակ առաջ: Ըստ մեզ հասած տեղեկությունների խավարումները բավականին մեծ ճշտությամբ կանխագուշակվում էին, օրինակ, հին Եգիպտոսում և Բաբելոնում: Մեր օրերում որպես գիտական տերմին կիրառվում է սարոս բառը, որը մեզ է հասել հնադարի աստղագետներից և բառացիորեն թարգմանվում է որպես կրկնություն: Դա այն ժամանակամիջոցն է, որից հետո խավարումները կրկնվում են գրեթե նույն հաջորդականությամբ: Այն հավասար է մոտ 6585 օրվա: Յուրաքանչյուր սարոսի ընթացքում տեղի է ունենում 70 խավարում, որոնցից 41-ը՝ Արեգակի, իսկ 29-ը՝ Լուսնի:*